

# Յամատեղ հայտարարություն Լաչինի միջանցքի շրջափակման վերաբերյալ, Լեռնային Ղարաբաղ

18.01.2023

Մենք՝ հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ աշխատող կազմակերպություններս, մտահոգությամբ հետևում ենք Լաչինի միջանցքի՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող կյանքի ճանապարհի շրջափակման հետևանքով առաջացած հումանիտար իրավիճակին:

Միջանցքի փակումը հանգեցրել է մարդու իրավունքների մի շարք խախտումների, ինչպես նաև մարդասիրական հասանելիության մերժման, որոնք անհամաչափ բացասական ազդեցություն են ունենում հաշմանդամություն ունեցող անձանց վրա:

Շրջափակման հետևանքով շուրջ 120,000 մարդ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող ավելի քան 9,000 անձինք, բախվում են մարդու իրավունքների կոպիտ խախտումների: Սա ներառում է նրանց ազատ տեղաշարժի մերժումը, քանի որ մոտ 1,100 մարդ չի կարող վերադառնալ Լեռնային Ղարաբաղի իրենց տներ, այդ թվում՝ 270 երեխաներ, որոնք բաժանվել են իրենց ծնողներից:

Երեխաների ներառական կրթության իրավունքը խաթարվել է, քանի որ սննդի մատակարարման անապահովություն պատճառով փակվել են մանկապարտեզներն ու դպրոցների նախադպրոցական խմբերը:

Ճանապարհի փակման պատճառով տարածաշրջանում անհնարին է դարձել առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների հասանելիությունը: Խանութները հիմնականում դատարկ են, իսկ դեղորայքը, այդ թվում՝ երեխաների և երկարատև առողջական խնդիրներ ունեցող անձանց համար, հիմնականում անհասանելի է Հաղորդումներ կան, որ սղության պատճառով երեխաներին մեծահասակների համար նախատեսված դեղեր են տրամադրում:

Իրավիճակը հատկապես բարդ է խնամքի հաստատություններում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց համար, քանի որ օրեցօր վատանում է դեղորայքի հասանելիությունը, և սնունդը սահմանափակ է հատկապես սննդային հատուկ պահանջներ ունեցող մարդկանց համար:

Հրատապ բժշկական օգնության կարիք ունեցող անձինք, որոնց բուժումը հնարավոր չէ կազմակերպել Լեռնային Ղարաբաղում, կարողանում են տեղափոխվել Հայաստան միայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օգնությամբ:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս, **կոչ ենք անում բոլոր կողմերին կատարել իրենց բոլոր պարտավորությունները՝ համաձայն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և Անվտանգության խորհրդի 2475 բանաձևի: Ադրբեջանի կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը պետք է անհապաղ ապաշրջափակեն Լաչինի միջանցքը՝ համաձայն 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ պարբերության: Մենք կոչ ենք անում ապահովել անարգել հումանիտար**

հասանելիություն, ինչպես նաև Լաչինի միջանցքով տեղաշարժի ազատություն երկու ուղղություններով բոլոր քաղաքացիական անձանց համար՝ ապահովելու անվտանգ, ժամանակին և անսահմանափակ մարդասիրական օգնություն բոլորի համար:

**Կոչ ենք անում Հայաստանի իշխանություններին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Լեռնային Ղարաբաղ վերադառնալ չկարողացողների մարդու իրավունքների իրականացումն ապահովելու համար՝ ապահովելով նրանց համար մատչելի պայմաններ և խելամիտ հարմարեցումներ: Մենք կոչ ենք անում տարածաշրջանի բոլոր առաջնորդներին միասին աշխատել խաղաղ լուծման ուղղությամբ՝ կանխելու հակամարտության ռազմական սրումը և նպաստելու խաղաղ բանակցությունների դյուրացմանը:**

Մենք կոչ ենք անում մարդասիրական դերակատարներին և իրավապաշտպան կազմակերպություններին համարժեք օգնություն ցուցաբերել հաշմանդամություն ունեցող անձանց տարածաշրջանում՝ հաշվի առնելով նրանց սեռային և տարիքային տարբերությունները, ինչպես սահմանված է միջազգային չափորոշիչներում, ներառյալ [Միջգերատեսչական մշտական հանձնաժողովի՝ հաշմանդամություն ունեցող անձանց մարդասիրական գործողություններում ներառելու վերաբերյալ ուղեցուցում](#):

Պետք է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացուցնող կազմակերպությունների իմաստալից մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման գործընթացներին՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանելու, խթանելու և առաջնահերթ դարձնելու նպատակով:

Ստորագրող կազմակերպություններ՝

Հաշմանդամության եվրոպական ֆորում

Հաշմանդամության միջազգային այլանս

